ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

№ 08-258/24 «22» օգոստոսի 2024թ.

<<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ տնօրեն Լ. Փնջոյանին
ք. Երևան, Քաջազնունի փ. 11/23
էլ. փոստ. yesargsyan@yahoo.com
հեռ. 096-62-89-94

Ծանուցում

(թիվ <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/40-5>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն /այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ Գնորդ/ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 06.03.2024 թվականին գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/40>> ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում Պատվիրատուի և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի/այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Վաճառող/ միջև 04.04.2024 թվականին կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/40-5 գնման պայմանագիրը/այսուհետ՝ նաև Պայմանագիր/: 22.08.2024 թվականի դրությամբ Պայմանագիրը մասնակի կատարված է և չկատարված մասը կազմում է թվով 220 հատ էլեկտրոդ՝ ընդհանուր 748000 (յոթ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ գումարով:

Պատվիրատուն 20.08.2024 թվականին Երևանի քաղաքապետարանից ստացվել է Շ/586-2024 շրջաբերական գրությունը, որին կից ներկայացվել են նաև ՀՀ ֆինանսների նախարարության N03/26-1/17361-2024 գրությունը, ՀՀ պետական վերահսկողության ծառայության Ե/801-23 գրությունը և այլ փաստաթղթեր: Համաձայն ներկայացված փաստաթղթերի տեղեկատվության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված պայմանը ներառված է Պայմանագրի 8,3 կետում:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ն որոշեց՝ միակողմանի մասնակի(Պայմանագրի չկատարված մասով) հրաժարվել թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/40-5 ծածկագրով գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.11-րդ կետով սահմանված դրույթները:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Մ. ՅԻՒ. ԱԴԱՄՅԱՆ